№ 41 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ 29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1894 № 41

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ՇԱՒԻՂ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

„ՇԱՒԻՂԸ“ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» Տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան; Առանձին համարները 5 շահի. Արտասահմանում տարեկան 8 ֆրանկ կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆ. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է առաւօտեան 8—4 ժամը: Կիրակէ եւ տօն օրերը 10—2 ժամը: Յայտարարութիւն ընդունւում է ամեն կէս տարուանը 5 ֆ. կամ 2 ռուբլի: Թէհրանում գրւում են միմիայն, խմբագրատան մէջ: Մեր հասցէն. Téhéran Rédaction CHAVIGH.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 1 շահի:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ինչ դիր է կատարում մեր հասարակութիւնը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Գեր. հայր Այվատեանը եւ խաչբաներր. Նամակներ խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ Արտաքին լուրեր.—Բանասիրական Թեմական տեսուչ Ատրպատականում:

ԻՆՉ ԴԻՐ Է ԿԱՏԱՐՈՒՄ ՄԵՐ ՀԱՍԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

—

„Շաւիղը“, այս մի քանի վերջին շաբաթներում, ականատես եղաւ շատ եղելութիւնների որ տեղի ունեցան ի մէջ հոգեւորականութեան և երկու դպրոցների հոգաբարձութիւնների, և որ շատ սովորական են եղել Թէհրանում:

Այս ամենի մէջ, մէկ բան միայն որ աչքի է զարկում, հասարակութեան բռնած դիրքն է և խաղացած դերը:

Հասարակութիւնը իւր շուրջը ամեն պնցած դարձածը տեսնում է, թէև երբեմն նկատողութիւններ էլ անում է, այսու ամենայնիւ, նա չէ կարողանում ըմբռնել, մի որոշ գաղափար կազմել եղելութիւնների և մինչև իսկ նորանց հեղինակների մասին:

Այսօր հրաւիրւում է նա մէկ խնդրի համար, կամայ—ակամայ գալիս է և ներկայանում: Հարցրէք մէկ անգամ նրանից թէ ո՞ւր և ինչի համար է եկել, տարակուսանօք կը պատասխանէ, „Վալլահ չեմ իմանում, այս ինչը ժողովի է կանչել և ես էլ եկել եմ“:

Յետոյ կը տեսնէք, միւս կողմում հասարակութեան դիմացը, մի քանի հոգու մէջ միայն, խօսւում—վիճաբանւում է մի ինչ որ խնդիր. և նա էլ լսում է շարունակ առանց հետաքրքրուելու այդ խնդրի մասին, բայց հէնց որ բանը հասնում է նրա կարծիքը հարցնելու, նրա տրամադրութիւնն իմանալու մէջ, կը տեսնէք մի խուլ շշնջիւն, մի թեթև իրարանցում—մէկը միւսին արմունկով հրում է նրանից հարցնելու համար թէ „ի՞նչ խաբար է ի՞նչ են ասում, ի՞նչ խընդիր կայ“, վերջապէս եթէ մի քանի խօսքով նրան բացատրւում է օրուայ հարցի մասին, հասկանում է կամ ոչ, և առանց իրանից ուզուած կարծիքը յայտնելու, տրամադրութիւնը ցոյց տալու, կրկին և եթ ընկնում է իւր սովորական անշարժութեան մէջ, կարծես նիրհում է...: Այդ պարագայում, աչքը լոյս օրուայ հերոսներինը, հասարակութեան աչքի առաջ, կազմում—կազմակերպում են, ինչ որ արդէն իրանք, երեկ ծրագիրը կազմել և մասլահաթի համար այսօր էլ նրա աչքից են անցկացնում։ Յետոյ մի ինչ որ արձանագրւում է, ստորագրւում է և հասարակութեան պարտաւորութիւնն էլ լրացել է... այժմ նա մեկնում է։ Հարցրէք կրկին նրանից թէ ի՞նչ հասկացաւ այս օրուայ այս համախմբութիւնից. կը պատասխանէ „ինչ եմ իմանում մէկն էս ասաւ, մէկն էն ասաւ, ի՞նչ գիտեմ ո՞ր մէկն էր զորդ ասում“։

Վաղն էլ հրաւիրէ նրան և ուզիր քանդել այս օրուայ շինածը. կը գայ և նոյնքան պաղարիւնութեամբ ականատես կը լինի նա և նոյնքան անտարբերութեամբ էլ կը թողնէ և կը մեկնի ինչպէս որ երեկ, առանց երբէք իրան իրաւունք համարելու հարցնել թէ „այդ ի՞նչ էր որ երեկ շինեցիք և ի՞նչ էր որ այսօր քանդում էք“։

Այդ ձևով Թէհրանում կազմւում և լուծւում է ամեն բան, ամեն խնդիր, թող լինի դպրոցական եկեղեցական, հոգաբարձուի կամ պատգամաւորի ընտրութիւն և այլն։ Ամեն բան այդպիսով ըսկսել և դժբաղդաբար շարունակւում է մինչև այսօր։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԹԵՄԱԿԱՆ ՏԵՍՈՒՉ ԱՏՐՊԱՏԱԿԱՆՈՒՄ

—

Գաւառներում ամեն մի գիւղի ժողովուրդը, զանազան ներքին, շատ անգամ չնչին անձնական նիւթական շահերի պատճառով, երկու-երեք միմեանց կատաղի թշնամի կուսակցութիւնների է բաժանւում, որոնք յաճախ այնպիսի մուր կերպարանք են ստանում, որ առաջ են բերում ժողովրդային ընդհարումներ, կռիւներ եւ արիւնահեղութիւն: Մեզ շատ անգամ պատահել է, որ այդ միմեանց թշնամի կուսակցութիւնները հաշտեցնելու դժբախտ պաշտօնը ստանձնել ենք, բայց միշտ էլ ապարդիւն են անցել գործադրուած բոլոր ջանքերը: Առերեւոյթս դրանց պարագաները երբեմն, նշանաւոր տօներին, հաշտւում են, բայց հէնց որ երեւան է գալիս մի չնչին, շատ անշնչան առիթ, կրկին զարթնում է նրանց մէջ վրէժի, քինախնդրութեան եւ ոխի ոգին, կրկին նրանք զրժտւում ու կռւում են: Ժողովրդի կեանքի մէջ այս աննպաստ, խիստ վնասաբեր երեւոյթը պատճառ է դառնում ժողովրդական ամեն մի ձեռնարկութեան խափանուելուն եւ, շատ պատճառներից մէկն էլ այն է, որ գաւառները զուրկ են կանոնաւոր դպրոցներից եւ ուսուցիչներից: Մի կուսակցութեան ընտրուած ու արժանաւոր ուսուցիչը հալածւում է միւս կուսակցութիւններից շատ անգամ ամենակեղտոտ միջոցներով, յաճախ նոյն իսկ մատնելով կառավարութեանը, իբրեւ կասկածելի անձնաւորութիւն: Իսկ այդ տեսակ լարուած, թշնամական յարաբերութիւններ տածող կուսակցութիւնների մէջ համերաշխութիւն կայացնելը ոչ թէ միայն սոսկ տեսչի այլ նոյն իսկ թեմական Առաջնորդի հեղինակութիւնից եւ ուժից բարձր մի կօնտրոլի այժ է պահանջում: Իսկ այդ ղեկավարող, իշխող աւթորիտական կազմակերպութեան պաշտօնը կարող են վարել Դավրէժի երկու թաղի հոգաբարձութիւնները, միացած թեմական Առաջնորդի հետ: Զայն բաղմաց, ձայն Աստուծոյ-ժողովուրդը մեծ նշանակութիւն է տալիս հեղինակաւոր անձանց ձայն Հարկաւոր չէ, (որովհետեւ յաւելի գրգռման առիթ տուած կըլինին) որ այդ կօնտրոլը հաշտարարի դեր կատարէ նրանց մէջ. այլ նրա պարտքը միայն այսքանը լինի, որ կարողանայ կուսակցութիւնների պարագլուխներին համոզել, որ հասարակական գործերում կարող են միանալ, իսկ անձնական շահերի տեսակետից դարձեալ նոյնը մնալ, թէեւ շատ ուրախալի կը լինէր, որ վերջին երեւոյթն էլ բոլորովին անհետանար: Երբ դրանք կը համոզուին վերոյիշեալ կերպով միանալու, այն ժամանակ դրանցից եւ երկու հոգի էլ ժողովրդից կընտրուին, հոգաբարձուներ, որոնց կը յանձնուի դպրոցի միմեայն նիւթական մասը կառավարելը, այն է՝ դպրոցի վերանորոգութեան, դասարանական կահկարասիների-գրասեղանների, գրատախտակների, եւայլն գործը: Իսկ ուսումնական մասին կը հսկէ միայն տեսուչը, որը հաշիւ կըտայ իւր գործունէութեան եւ դպրոցների ուսումնական-բարոյական վիճակի մասին, իւրաքանչիւր տարի:

Իսկ ինչ պիտի անէ թեմական դպրանոցը: Նա կարող է գաւառների ամեն մի բա ղմ

Թէոֆրաեղից է ծագել այդ տխուր երեւոյթը և ինչ է դոլա սկզբնապատճառները, դժուար չէ պատասխանել այդ հարցին։

Նախ թէ սկիզբները, հասարակութիւնը իւր նախնական վիճակում, փակուած լինելով Թէհրանի պէս մի քաղաքի մէջ (որն այս վերջին ժամանակներում միայն սկսել է յարաբերութիւններ հաստատել արտաստհմանի հետ), զուրկ է եղել ամեն տեսակ ազգային հաստատութիւններից, կազմակերպութիւնից, որով և նորանց մասին չէ ունեցել ամենավոքրիկ գաղափարն անգամ։ Եւ եթէ երբէք պատահել են անձնաւորութիւններ, որոնք այսօր ազգի գործիչներ—մշակներ հրաչակուելու փառքն ունին, իրանց և իրանց գործերին այն դիրքն են տուել, որ հասարակութիւնը կարծել է անսնել յանձին նոցա գերբնական և անմատչելի էակներ, մէկ գերիվերոյ զօրութիւն, որ մինչև իսկ չէր կարելի համարձակել նրանց հետ խօսել ինչ մնաց գաղափարակցել, կարծիք տալ կարծիք առնել։ Այդպիսով իւրեանց անձնաւորութիւնները խորհրդաւոր պահելով, պարտաւորեցրել են հասարակութեանը որ իրանց խօսքերը իբրև երկնային պատգամ ընդունին. մի տեսակ պատկառանքով, յարգանքով վերաբերուին դէպի իրանց։ Նրանց խօսքին խօսք բերելը կը նշանակէր մի մահացու մեղք գործել։

Իսկ յետոյ երբ հասարակութիւնը, ժամանակի պահանջի համաձայն, իւր ամօթխածութիւնից դուրս գալու պէտքը հետզհետէ զգալով երբ ուզեց իւրեան մէկ նշանակութիւն տալ և ուշադրութիւն դարձնել իրան պատկանող գործերի և գործիչների վերայ, (քանի որ արդէն այդ իրաւունքն էլ իրան տրուում էր), նա ներկայացաւ գործին մասնակցելու. բայց ափսոս որ, այս անգամ էլ նրա ներկայութիւնը ձևի համար միայն ընդունուեց և թոյլ չը տրուեց նորան իւր կարծիքը, ինչ որ էլ լինէր նա, ազատ համարձակ յայտնելու ժողովներում։ Նա էլ չունենալով հասկացողութեան այն բարձրը ստոյ ճանը որով կարողանար ճակատուռ ճակատ իւր իրաւունքները պահանջել, պաշտպանել և գործերի վերայ հսկել, ընկել է մէկ տեսակ անտարբերութեան մէջ, „ինչ ուզում են թող անեն, մեզ ինչ“ ասելով, Ահա թէ ինչու երբ այժմ ամեն արտօնութիւններ էլ որ տրուել են իրան, և հրաւիրուում է իրան վերաբերեալ ո և է մի գործ կարգադրելու, նա այդ տեղ ներկայանում է բոլորովին անպատրաստ։ Այստեղից պարզ երևում է որ հասարակութիւնը, ներկայ հանգամանքներում, չէ կարողանում երբէք իրան տրուած կատարեալ արտօնութիւններից օգուտ քաղել և փոխանակ որպէս իրաւատէր ազգեցիկ դիրք բռնելու, գործողի բարձր պարտաւորութիւնը ստանձնելու, կուրօրէն հետևում է միայն լոկ երևոյթների այսինքն կատարում է կրաւորական մի դեր, որտեղից և ծագում են տհաճութիւններ։ Ուրեմն է յանցանքը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Դերապատիւ հայր Այվատեանը եւ Խաբեբաները *)

Յիշում եմ... շատ լաւ յիշում եմ այն գրական երևոյթը Գեր. հայր Այվատեանը, խօսելով ընթերցանութեան նշանակութեան մասին, ուղղեց վերջ ի վերջոյ իւր խօսքը տեղւոյս հայկական ուսումնարանների հոգաբարձութեանց և տրագիկական ձայնով բացականչեց։ „Դուք երկուսդ էլ խարդախներ էք խաբեբաներ էք, խաբում էք ժողովրդին, կամ միացէք գործեցէք կամ հեռացէք, հրաժարուեցէք պաշտօնակատարութիւնից և թոյլ տուեցէք ժողովուրդին գործելու...“ Յիշում եմ նաև, երբ պարզամիտ հասարակութիւնը բուռն ծափահարութեամբ պատասխանեց գեր. հօր արտասանած գեղեցիկ էպիտէտին և ագահաբար որոնում էր աչքերով այդ „խաբեբաներին“, բայց որոնք, ի մեծ զարմանս նոցա, նոցանից բարձր ծափահարում էին և խորհրդաւոր ակնարկ ձգում գեր. հօր երեսին, որով կարծես թէ ցանկանում էին ասել „Օ՜, դուք, գեր. հայր, շատ քաղաքագէտ գտնուեցաք, հասկանում ենք, դուք ո՛ր կուսակցութեան խաբեբայ անուանեցիք“... Եւ իրաւի, գերապատիւ հայր Այվատեանը, խաբեբայ անուանելով երկու ուսումնարանների կուսակցութեանց, կարող ենք ասել, որ գոհունակութիւն տուեց ամենին և ոչ մէկի սիրտն էլ, ըստ երևոյթի չը ցաւացրեց, չը վիրաւորեց։ Դորանով։ Նախ՝ հասարակութիւնը, երևի իմացաւ, որ գեր. հայրը վերին աստիճանի անկողմնապահ և անաչառ է. երկրորդ՝ Դովլաթաթաղի ուսումնարանի կուսակցութիւնը կարծեց, թէ հայր Այվատեանը, „խաբեբայ“ ասելով, մատնացոյց արաւ Հայկազեան վարժարանի կուսակցութեան վերայ, վերջինս, հաստատ համոզուած լինելով. որ գեր. հայրը իւրեանց կողմն է, վստահ էր, որ գեր. հօր արտասանած „խաբեբայ“ խօսքը և „հակառակ կուսակցութիւնը“ նոյնանիշ բառեր էին նորա համար, և վերջապէս ինքն հայր Այվատեանը, երևակայում եմ, որքան պէտք է գոհ մնար այդ խօսքերից, որ լառաջ բերեց այդպիսի մի բուռն ծա-

*) Յօդուածագիրը Թէեւ քննադատում է մէկ իրողութիւն, սակայն եւ չենք կարծում որ ինքն՝ իրան էլ ազատ կարող է համարել իւր մէկ ընթացքի համար հասարակութեան քննադատութեան ենթարկելուց։

Խմբ.

գիւղերից մի—մի հատ ուշիմ աշակերտ պահել որպ բանոցում այն պայմանով, որ դրանք աւարտելուց յետոյ մտնեն գիւղերը գործելու կամ քահանայական եւ կամ ուսուցչական պաշտօնով, նայելով իրանց աշակերտների ընդունակութեան ու բնական հակումներին։

Այլ եւս այստեղ ուսուցիչները ոչ մի պատճառ չեն ունենալ իրանց նիւթականի մասին մտածելու կամ առարկելու, քանի որ «Դաւառական միացեալ հոգաբարձութիւնը» եւ տեղական գիւղական հոգաբարձուներն այդ բանը կարգադրելն իրանց վրայ են առնում, այնուհետեւ ուսուցիչը կարող է միմիայն անմնատուր լինել իւր պաշտօնին. առանց բեռնաւորուած լինելու ընտանեկան կամ տնտեսական հոգսերով, նա այնուհետեւ կարող կը լինի խաղաղ, անվրդով հոգով, ինչպէս ասում են „կպնել իր գործին“։

Կեդրօնական դպրոցի հարցը բոլորովին աւելորդ ենք համարում մենք եւ իսկի չի էլ իրականանալ, դրա փոխարէն առաջարկում ենք Արամեան դպրոցը Թեմական դպրանոցի վերածել, որն աւելի քիչ ծախք կը պահանջէ, քան Թէ մի կեդրօնական դպրոց։

Մենք, ոչ մի առաջ ունենալով պարսկահայ գաւառների հայ բնակիչների ներկայ տնտեսական եւ մտաւոր վիճակը, սկզբունքով եւ համոզմունքով դէմ ենք այդ վաղամեռիկ կեդրօնական դպրոց ունենալու հարցին։ Գիւղացի մանուկը, մեր կարծիքով պէտք է մնայ գիւղում եւ զուգանի մանի հետ գիրք բռնելն էլ սովորէ։ Դա օգտակար է նոյն իսկ այն տեսակներից, որ դպրոցի աշակերտը դրպրոցում իւր ստացած պաշարով կարող է խմորել եւ իւր ծնողներին, որոնք ամենալարված հետաքրքրութեամբ կը լսեն իրանց զաւակների պատմածները։

Կարճ խօսքով՝ մենք ցանկանում ենք, որ կազմուի գիւղական փոքրիկ ինտելիգէնտ—եթէ կարելի է այդ բառը յատկացնել իրանց հասարակութեան, որը կարողանայ Թէ լաւ վարուցանք անել եւ Թէ սիրել գիրքը, ընթերցանութիւնը. եթէ մենք կարողանանք առ այժմ այդքանն անել, մեծ գործ կատարած կը լինինք։

Գիւղացի մանուկը 10—12 տարեկան հասակից ընկնում է քաղաքի բազմազոյն, հրապուրիչ կեանքի մէջ եւ նրանում փոքր առ փոքր մեռնում են պարզութեան, աշխատասիրութեան եւ կամաւորութեան սերմերը, որոնց նա իւր հետ բերել էր գիւղից։ Անցնում է 7—8 տարի եւ գիւղական պարզասիրտ մանկան փոխարէն ձեզ ներկայանում է մի այլանդակուած արարած, որը ոչ մի կերպով չէ կարող օգտակար լինել իւր հայրենի գիւղին։ Նրա համար զարշելի են իւր գիւղացի ծնողները ընկերները, գիւղական կեանքը, երկրագործական աշխատանքը, վերջապէս ամեն բան, ինչ որ գիւղական է։ Ուրեմն քաղաքի դպրոցը չէ կարողանում իւր բոլոր ջանքերով ու սիստեմական-անսիստեմատիկութիւնով դիմադրել քաղաքային կեանքի ազդեցութեանը։ Դրանով գիւղական մանուկը բնաւորապէս այլասերւում է։ Եւ իսկապէս ինչ են պարսկահայոց քաղաքները, եթէ ոչ ասիական մեծամեծ գիւղեր, որոնց բնակիչները հարուստ են, ունին հոյակապ տներ, à la française—շորեր. փարթամ

փոխարութիւն. O, tempora! O, Mores!։

Բայց գուցէ յարգելի ընթերցողը մեզ հարց առաջարկէ թէ ինչո՞ւ, ինչ մեղաց, ինչ խաբեբայութեանց համար գեր. հայր Այվատեանը արժանացրեց այդ երկու կուսակցութեանց յիշեալ գեղեցիկ մականունը։

Առհասարակ հայհոյել մի որ և իցէ մասնաւոր անձնաւորութեան վտանգաւոր է, որովհետև դորա համար կարող է ոնպատուողը իւր կողմից եթէ ոչ աւելի մեծ անպատուութեան արժանանալ գոնեա ստանալ նորա փոխարէնը. բայց, հայհոյել հրապարակապէս նոյն անձի նքներից կազմուած մի կօրպօրացիան, չ'ապացուցանելով նորա գործ դրած խաբեբայութիւնները, երևի, ըստ գեր. հօր կարծեաց, լիոյլատրելի և ներելի է... Մենք ըստ սոյասեցինք, որ գեր. հայրը մանրամասնօրէն կը քննէր մեր ազգային գործերը, կպատացուցաներ, վերջապէս, հասարակութեան դիմաց ուռումնարանների հոգաբարձութեանց գործ դրած խաբեբայութիւնները, սակայն, տարաբաղդաբար, մեր յոյսերն ի դերև ելան, որովհետև որքան մենք գիտենք, յիշեալ կուսակցութիւնների խաբեբայութեան ապացուցման մի թեթև ակնարկ անգամ չեղաւ նորա կողմից, այսքանը միայն կարող ենք ասել, որ գեր. հօր գործունէութեան ամբողջ ջանքերը եղել են միացնել, ըստ գեր. հօր ասած, խաբեբաներին և, այդ պիսով, կազմել մի գործող ուժեղ մարմին, որով և մենք արդէն կարող ենք երևակայել, թէ ինչ հրաշքներ կարող են գործել ապագայում նորա անուանեալ խաբեբաները միացեալ ուժերով, չէ՞ որ մէկ խելքը լաւ է, իսկ երկուսն, էլ աւելի լաւ։

Գեր. հայր Այվատեանը, երևի չէր իմանում, որ Թէհրանի հայ հասարակութիւնը սկսել է նոր արթնանալ այն դիւցազնական քնից, որի մէջ խորասուզուած է եղել մինչև այժմ։ Զանազան գաղափարների ազդեցութեան ներքոյ, բնականաբար, պէտք է յառաջ գային կուսակցութիւններ, որոնք և՞ պէտք է գործէին այնպէս, ինչպէս նոցա գլխի ուղեղը կարող էր հասկանալ։ Բայց եթէ կուսակցութիւնները, կամ նոցանից մէկը սխալւում է. այդ չի նշանակում որ նորան պէտք է անպատճառ խաբեբայ անուանել։ „Errare humanum est" ասում է լատինական առածը, մարդկութեան սեփական է սխալուիլ և միայն սխալուելով նա կը յառաջադիմէ։ Թողնենք, գեր. հայր Այվատեանը ապացուցանէր հրապարակապէս այդ երկու կուսակցութիւնների խաբեբայութիւնները այնպէս, ինչպէս նա համարձակապէս և հրապարակապէս անուանեց նոցա խաբեբայ։ Այս բանը նա պարտաւոր էր անել, որպէս զի տեղւոյս հասարակութիւնը ճանաչէր խաբեբաներին, աշխատէր ամեն կերպ խոյս տալ նոցանից և հեռացնէր նոցա ազգային գործերից։

Անտարակոյս, իւրաքանչիւր հասարակութեան մէջ կարող են հանդիսանալ պարապաշրջիկ բաղդախնդիր մարդիկ, որոնք թէ ճարպիկութեամբ և թէ իւրեանց գործ դրած սոփեստութիւններով, ի վնաս հասարակութեան, կաշխատեն մի դեր խաղալ ազգային գործերի մէջ լոկ իւրեանց շահամոլ դիտաւորութիւնները իրագործելու նպատակաւ, եթէ տեղւոյս հասարակութեան մէջ յայտնուել են այդպիսի անհատներ, և եթէ այդպիսիները բուն են դրել, մեր հասարակական շրջաններում, թող անուանէր նոցա, և ոչ հրապարակապէս անարգէր մի ամբողջ հաստատութիւն, որը դժբաղդութիւն է ունեցել ընդունել նոցա իւր շրջանի մէջ։

—

Ի՞նչ արաւ ժողովուրդը, կարողացաւ ճանաչել այդ խաբեբաներին։ Երևի ո՛չ, որովհետև ինչպէս ցոյց տուեցին ընտրութիւնները, ընտրուեցան դարձեալ յիշեալ կուսակցութեանց պարագլուխները, որոնց գեր. հայր Այվատեանը, բաղդ ունեցաւ, խաբեբաներ անուանելու։

—

Ի՞նչ արաւ գեր. հայր Այվատեանը նա փոխեց միայն դէկորացիան, բայց գլխաւոր գործող անձինք մնացին մի և նոյն պարոնները...

Բ. Ա.—եանց

Նամակ խմբագրութեան

—

Թէհրան 27 հոկտ. 94

„Շաւղի" 40 թիւում կարդացի Յովհաննէս խան Մասեհեանի նամակը որ, վերաբերում էր „Շաւղի„ 39 թուի խմբագրականին և երրորդ երեսում տպուած նամակին, որի գրողի անունը յիշատակել անգամ աւելորդ էր համարել։ Նամակի բովանդակութիւնից պարզ երևում է որ այդ գրութիւնը թէ հրաժարական է թերթին աշխատակցելուց, թէ բողոք, երրորդ երեսի նամակը առանց իւր դիտաւորութեան և համաձայնութեան (?) տպագրելու համար, առ թերթի տրտօնատէր-հրատարակիչը, և թէ մի և նոյն ժամանակ իւր չքմեղականը։ Ինչ որ էլ լի նի նամակի բնաւորութիւնը այդ ինձ չէ վերաբերում։

Միայն որովհետև 39 թուի երրորդ երեսի նամակը իմ գրածն է ուղղակի իմ ստորագրութեամբ, որի մէջ և Յովհաննէս խան Մասեհեանը կարծում է տեսնել, որպէս Ազգային Ուսումնասիրաց ընկերութեան ատենապետի, իւր անձնական անկեղծութիւնը և շարժառիթների ազնուութիւնը կասկածի ենթարկուած լինելը, ուստի մէկ տխուր պարտաւորութիւն եմ զգում հերքել նորա սխալ կարծիքը այդ մասին։

Նախ ես չեմ կարծում որ իմ այն յօդուածով հակասած լինիմ թերթի ուղղութեանը, որովհետև ես ուղղակի նկարագրել եմ հոկտ. 9-ի ամբողջ եղելութիւնը։ Մէկ որ և է եղելութիւն նկարագրելը մէկ թերթում, միթէ նոյն թերթի ուղղութեան հակասել է, բացի այդ որ իմ յօդուածում չը կայ այնպիսի մէկ բառ որ հակառակ լինի ազգային ժողովի կայանալուն կամ ազգային հոգաբարձութեան ընտրութեան սկզբունքին, ինչ մնաց մէկ թերթի ամբողջ ուղղութեանը։ Իսկ ինչ վերաբերում է ուղղակի իմ յօդուածին իբրև հակասող նոյն

ընտանեկան կեանք եւ այլն։ Քաղաքային կեանքի տուածը գիւղացուն այն է լինում, որ առաջուայ անկեղծ, պարզ գիւղացին մի քանի տարուայ ընթացքում դառնում է կեղծաւոր, խորամանկ եւ շահադիտական ձգտումներով տոգորուած մի արարած։ Այսպիսի հասարակական կեանքում մեծացած գիւղացի մանուկը վերջ ի վերջոյ կորած է համարւում գիւղացու համար։ Ուրեմն, եթէ մեր անկեղծ ցանկութիւնն է օգնել հայ գիւղացու լուսաւորութեան գործին, տանք նրան մի-կամ երկդասեան կանոնաւոր, արժանաւոր եւ կրթուած ուսուցիչներով։ գիւղական դպրոցներ եւ կրթուած քահանաներ։

Շատերն իրանցից այդ գործը ոտ անելու համար նշանակեցին այժմեան չը գիտենք թեմական (??) ասենք, թէ գաւառական-տեսչին, ամեն տեսակ լիազօր իրաւունք տալով նրան կրթական գործի վերաբերմամբ։

Նախ՝ մի բան, որ մեզ համար դեռ անլուծելի է մնացել, այն է, որ արդեօք նշանակուած պարոնը թեմական, թէ գաւառական տեսուչ է. այդ երկուսի մէջ շատ զանազանութիւն կայ, եթէ թեմական է ինչ, է նշանակում սահմանափակուիլ միմիայն՝ յայտնի կուսակցութեան պատկանող մարդկանց համար Աւետեաց երկրի նշանակութիւնն ունեցող Սայմասդ գաւառով, ուր առատ գինի, համեղ կերակուրներ եւ կենսական ուրիշ պիտոյքներ ձեռք բերելը շատ հեշտ է եւ սուր, վաղուց հետէ հիմնուած կան քիչ թէ շատ կանոնաւոր դպրոցներ, (բացի մի քանի գիւղերից, որոնց բնակիչների մէջ 7—8 տունն է միայն հայ, այն էլ յետին ջրաւորութեան մէջ) եւ նոյն իսկ գրադարան-ընթերցարան։ Իսկ եթէ նա գաւառական տեսուչ է, հապա այդ փքուն միտղոսը-թեմական տեսուչ—ուր մնաց։ Մեզ չէ հետաքրքրում այդ տիտղոսը, որովհետեւ մեր ներկայ անիշխանական կացութեան մէջ կարող է մէկն իրան տիեզերաշէն տեսուչ անուանել, բայց խնդիրը նրանումն է, որ տիտղոսը պարզում է եւ անհատի պաշտօնը. հասարակ գինուորը իրան չէ կարող գեներալ-լէյտէնանտ անուանել, հակառակ դէպքում նրանից կը պահանջուի եւ իւր կրած տիտղոսին համեմատ գործունէութիւն։

(կը շարունակուի)

թափի խմբագրականին (եթէ այդպէս էլ լինէր) պատասխանում եմ, որ մէկ թերթի կարող է հազարաւոր խմբագրականներով պաշտպանել մէկ սկզբունք, բայց բուն գործի մէջ գալով սկզբունքը կարող է տեղի տալ անձնաւորութեանց, երբ գործում են անձնական հաշիւները և անհատները ոչ թէ թերթը իւր պաշտպանած սկզբունքներով և գործից դուրս եկած արդիւնքն էլ հաւանական է որ հակառակ լինի ս և է մէկ խմբագրականի և այդտեղ թերթը անձնական լինելու չափ մեղաւոր չէ, քանի որ թերթում էլ նոյն անձնաւորութիւններն են գործում, որ, ոչ թէ մէկ թերթ այլ գուցէ ամբողջ տրեզերք կուզէին իւրեանց ազդեցութիւնը տակ առնել, այս թերթը իւր ընթացած ճանապարհի մէջ որպէս ես կարծում եմ, դեռ շատ ազդեցութիւնների կենթարկուի, կընկնէ և կը բարձրանայ մինչև որ կարողանայ այս սարսափելի քաոսի միջից անվնաս դուրս պրծնել և ձեռք առնել իւր ուղղութիւնը, քանի որ դեռ մենք անձնաւորութիւններ ենք քննում։ Գալով նորա անձնաւորութեանը կասկածի ենթարկելը բոլորովին սխալ է մինչդեռ ես նորան իբրև յառաջադիմական եմ ներկայացրել իմ գրութեանս մէջ, և երևակայական բէֆօրմների ետևից վազողների մասին շատ անգամներ արդէն պատիւ եմ ունեցել անձամբ նորա հետ խօսելու։

Իսկ ինչ վերաբերում է սարքած խաղերին, հաստատում եմ այդ կրկին և Յովհաննէս խանը եթէ ինձ չէ ուզում ճանաչել 1883-ից մինչև այսօր տեղի ունեցած ամեն գործերում, գործակից, զէթ կարող էր մի ականատես վկայ համարել ամեն կարգի ազգային, գոլորոցական թատերական և վերջերս էլ լրագրական գործերում, այնպէս որ մէկ տարհաճելի մինչև իսկ շատ տխուր մէկ պարտաւորութիւն կը լինէր ինձ համար 85-ից ի վեր պատահած ամեն դէպքերը մի առ մի նկարագրել գուցէ և ինքն էլ այդ բանից գոհ չը մնար։ Բայց թէ ինչու լռել էի մինչև այսօր, այն պատճառով որ ինքն, ես և ուրիշ շատ անձնաւորութիւններկազմած ենք եղել մէկ կուսակցութիւն և պաշտպանած ամեն բան մասնաւոր կերպով, բայց որովհետև մեր կուսակցութիւնը քայքայուեցաւ, և մեր պաշտպանած խնդիրները ուղղակի անցան հասարակութեան ձեռքը, էլ ինչ մնաց մեզ պաշտպանելու և լռելու, պէտք էր ուրեմն ազդարարել որ այն ամեն ինչ որ խղճի մտօք կարելի էր անել մէկ կուսակցական գործի մէջ, այլ ևս չէ կարելի անել ընդհանրութեան վերաբերեալ գործերում։

Միքայել Ց. Եղիազարեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Թէհրան 25 հոկ. 84

Կարդացինք «Շաւղի» 40 համարում Թէհրանից մի նամակ, որի մէջ պահանջւում էր սովետների օգտին հաւաքուած փողի հաշիւը կամ ուր ուղարկուելը։ Սովետների հումար եմ միջոցու հանգանակուածը 1191 ղրան է որ եւ յողուածագրին բաւականութիւն տալու համար պարտաւորութիւն եմ զգում նորա հաշիւը ներկայացնել։

Պ. ոլ. Եղրարք Թումանեանցից 150 ղ. Սկեանդար Վարդանեանից 400 ղ. Տ. Մ. Վարդանեանից 100 ղ, Արամեան ընկերութիւնից 100 ղ. Յովսէփ Թադէոսեանի միջոցու 150 ղ, Մինաս Ա. Գալստեանի միջոցու 71 ղրան։ Գումարն է 1191 ղրան։

1894 28 Յուլիս 200 մանէթ մէկ փոխանակագրով ուղարկուեցաւ «Մշակի» խմբագրութեան. 1—78ով—1123 ղրան 60. որի մասին արդէն „Շաւղի“ 28 համարում գրուած էր 1 տետրակ, փոստի ծախք,—սեւ փողի տարբերութիւն 5—50. ամ. բողջ կանէ 1129 ղրան 10, կշիռն է 61 ղրան 90 որը ինձ մօտ է կաշխատենք ապառիկներից հաւաքել, եւ ուր որ հարկն է նպաստել։

Ռաֆայէլ Թադէոսեանց

Նամակ խմբագրութեան

Հանձնէք պատուական լրագրոյդ միջոցու հրատարակել յետագայ համառօտ պատասխանս, այն 720 ղրանի համար, որը հանգանակուած է վեց հոդուց կազմուած մի յանձնախմբով. եւ որի մէկն էլ ես եմ եղել։

Հանգանակուած գումարն է 700 ղրան որի 90 ղրանը դեռ հաս ապառիկ, իսկ մնացորդ 610 ղրանը մինչեւ այժմ մեզանից անկոխ պատճառներով, չենք կարողացել յատկացնել այն բարեգործական նպատակին, որի համար իսկապէս հանգանակուած է։

Վերջին ճիգն ևս պիտի անենք, այս գումարը ուղղակի իւր նպատակին ծառայեցնելու. եթէ նորից այդ մեզ անկարելի լինի, վերջը կը մտածենք մի այլ նպատակի ծառայեցնել կամ կրկին ուղարկել սովետներին եւ որի մասին կը յայտարարուի ոնէ մի Ծկրթում ի գիտութիւն նպաստողաց։

Ա. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Որպէս լսում ենք, գեր. հայր Այվազեանը խնդրագրով դիմել է Նորին Վսեմութեան նախարարապետին, կըրթութեան գործը բախտախնդիրների ձեռքից վերջնականապէս ազատելու և հոգեւոր իշխանութեան վերահսկողութիւնը ամեն դէպքում յարգել տալու համար։ Ն. Վ. նախարարապետը բանաւոր գրտնելով խնդիրը բարեհաճել է, յատուկ մի հրամանագրով հաստատել գեր. հօր պահանջները և ճանաչել նորընտիր Ազգային հոգաբարձութիւնը իբրև ազգային միակ մարմին։

—

Ամսոյս 28-ին ուրբաթ օրը առաւօտեան ժամը 9 ին, գեր. հայր Այվազեանը մեկնեց դէպի Ն. Զուղայ շատ հաւանական է որ յունվարին կրկին վերադառնայ Թէհրան, մի քանի առկախ մնացած խնդիրների վերջ տալու համար։

—

Անցեալ կիրակի օր, Ս. Գէորգ եկեղեցում ս. պատարագից յետոյ կատարուեց ի Տէր հանգուցեալ Ն. Կ. Վ. հափառութեան ռուսաց կայսեր համար մի մեծաշուք հոգեհանգիստ։ Հոգեհանգիստին ներկայ էին բացի ամբողջ հայ հասարակութիւն և Ն. Վ. Բիւտցով ռուսաց լիազօր դեսպան իւր ամբողջ դեսպանական մարմնով և ամբողջ ռուս գաղթականութիւնը։ Գեր. հայր Այվազեանը շատ ազդու կերպով ճառեց Աւլեքսանդր III կայսեր ցաւալի մահուան վերայ։ Հոգեհանգստից յետոյ Ն. Վ. այցելեց գեր. հօրը։ Մի և նոյն օրը մի տխուր դէպք պատահեց եկեղեցում, հոգեհանգստի ժամանակ մեծ ջահերից մէկի թոկը կտրուելով վերևից վայր ընկաւ, թէև բարեբաղդաբար նորա անկումն այդ խուռն բազմութեան մէջ ոչ ոքի չը վնասեց, այսուամենայնիւ եկեղեցիների վարչութեանց ուշադրութիւնն ենք հրաւիրում այս կէտի վերայ, թող չը խնայեն մէկ քանի ղրան թոկերը երկաթէ շղթաների փոխելու, և պատահական աղէտների առաջն առնելու համար։

—

Ամսոյս 21-ին կարճատև հիւանդութիւնից յետոյ վախճանուեց, տեղւոյս ռուսաց առևտրական բանկայի մասնաճուղի նոր նշանակուած դիրեկտորը։

—

Ռաշտից մեզ գրում են հետևեալը։ Հեռագիրը գուժեց ռուսաց թագաւոր-կայսրի մահուան լուրը. երեկ հոկ. 23-ին հոգեհանգիստ կատարուեց տեղւոյս եկեղեցում, հոգեհանգստի արարողութեան ներկայ էին ռուսաց փոխ-հիւպատոսը, պարսիկ պետական պաշտօնեաներից մի քանիսը, պետական բանկի տնօրէնը և պարսիկների ու հայերի ստուար բազմութիւն։ Դամբանականներ կարդացին, մի յոյն գաղղիերէն լեզուով, տէր Ղևոնդ քահանան ռուսերէն լեզուով, պ. Հացագործեանը պարսկերէն լեզուով խօսեց. անմահութեան մասին, իսկ ուսուցիչը հայերէն լեզուով։ Եկեղեցու սեղանի առաջ, փռուած էր ի նշան սգոյ, սև կտոր։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Ամսոյս 28-ի հեռագիրը յայտնում է, որ չինացւոց կառավարութիւնը մի շրջաբերականով դիմել է եւրոպական պետութիւններին, որպէսզի միջամտեն ժապոնիայի պատերազմին և խաղաղութիւն հաստատեն։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ